ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 մայիսի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

75
(2741)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄ ՍԿՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Առանձնապես որեւէ կարեւոր գործով չզբաղված, ՀՀ նախագահի պաշտոնը զբաղեցնող Վահագն Խաչատուրյանը, որի ղեկավարած կառույցի վրա տարեկան 2-3 մլրդ գումար է ծախսվում (աշխատավարձ, վարորդ, աշխատակիցներ, ճամփորդություններ), հիմա էլ որոշել է Հայաստանին ագրեսոր դարձնել: Մասնավորապես, Վահագն Խաչատուրյանը հանդիպել է Կատարի հայ համայնքի հետ եւ բավականին տարօրինակ հայտարարությամբ հանդես եկել: «Այն, ինչ տեղի ունեցավ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ..., հենց այդ պատերազմը, որը կանխատեսելի էր դեռեւս 1990-91 թվականներին, երբ մենք սկսեցինք մեր խնդիրներն Ադրբեջանի հետ լուծել պատերազմի միջոցով, տեսանելի էր, որ այդպիսի մի իրավիճակ լինելու էր, բայց մենք չէինք ցանկանում առերեսվել այդ խնդրի հետ: Ավելի հեշտ էր հանրությանը ներկայացնել, որ մենք հաղթել ենք 1994 թվականի պատերազմի ժամանակ, մայիսին կնքել էինք (չասեմ՝ խաղաղության, քանի որ դա խաղաղության չէր) պատերազմը դադարեցնելու մասին համաձայնագիր»: Ինչպես ֆիքսեցինք, Վահագն Խաչատուրյանը ներկայանում է այնպես, կարծես Հայաստանին պատերազմն է ձեռնտու, այլ ոչ թե խաղաղությունը: Եվ սա նաեւ այսօրվա իշխանությունների վարած քաղաքականությանն ու հայտարարություններին հակադրվող են, քանի որ հենց Նիկոլ Փաշինյանն է խոսել խաղաղության դարաշրջան բացելու, Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունները լավացնելու մասին: Ստացվում է՝ ըստ Խաչատուրյանի՝ Հայաստանն է պատերազմ սկսողը եղել եւ ձգտել է այդպես կարգավորել հարցերը, այլ ոչ թե բանակցությունների միջոցով:

Իրականում Ադրբեջանը սկսեց ագրեսիան, եւ դա վաղուց հատատված իրողություն է:

Մայիսի 29-ին խորհրդարանում բավականին թեժ է լինելու: Այդ օրը վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ կառավարության անդամները խորհրդարանում կլինեն: Ազգային ժողովի համատեղ նիստերում կքննարկվի ՀՀ 2022 թվականի պետբյուջեի կատարողականը: Այսպիսով, երկուշաբթի օրը խորհրդարան են գալու վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱԱԾ տնօրեն Արմեն Աբազյանը, ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը, ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը, ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը, Հաշվեքննիչ պալատի նախագահ Ատոմ Ջանջուղազյանը, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյանը, ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյանը, ԲՏԱ նախարար Ռոբերտ Խաչատրյանը: Բնականաբար, անդրադարձ է կատարվելու նաեւ պետական պարտքին: Ըստ այդմ, ՀՀ պետական պարտքում 2,536.7 մլրդ դրամը (6,445.4 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 1,650.0 մլրդ դրամը (4,192.3 մլն ԱՄՆ դոլարը)՝ներքին պարտքը: 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 49.3%-ը, ընդ որում՝կառավարության պարտքը կազմել է ՀՆԱ-ի 46.7%-ը: Իսկ, ահա, 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ներքին պետական պարտքը, նախորդ տարեվերջի համեմատ, աճել է 412.5 մլրդ դրամով (33.3%-ով), եւ դրա տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքի կառուցվածքում աճել է՝27.9%-ից հասնելով 39.4%-ի:

ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը կրկին հայտնվել է սեփական թիմակիցների քննարկման թիրախում: Թորոսյանը որքան էլ փորձում է ցույց տալ, որ թիմակիցների հետ լավ հարաբերությունների մեջ է, բայց նա թիմում փորձում է դիրքավորվել որպես ընդդիմադիր: Բանն այն է, որ Թորոսյանը ԱԺ-ում երբեմն ընդդիմադիրների նման թունդ ելույթներ է ունենում, սուր քննադատում սեփական թիմակիցներին: Օրինակ՝ չորեքշաբթի օրը, երբ ԱԺ-ում քննարկվում էր Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրության հարցը, հիմնական զեկուցողը պետք է լիներ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը, սակայն նա չէր եկել ԱԺ, քանի որ գործուղման էր, ուստի հարցը զեկուցեց ԲԴԽ նախագահի պարտականությունները ժամանակավոր կատարող Վիգեն Քոչարյանը: Արսեն Թորոսյանը բավականին սուր արձագանքեց սրան՝կոչ անելով Կարեն Անդրեասյանին գործուղումներն այնպես կազմակերպել, որ չհամընկնեն ԱԺ գալու հետ: ՔՊ-ականները տեւական ժամանակ է՝ քննարկում են՝ ինչու է Թորոսյանն իրեն ագրեսիվ պահում, ինչու է իրեն թիմում ընդդիմադիրի նման դրսեւորում, հաճախ առանձին զրույցների ժամանակ էլ է թիմակիցներին հակադարձում, փորձում քննադատել նրանց: Մի մասը նշում է, որ դա պայմանավորված է Նիկոլ Փաշինյանի հետ լարված հարաբերություններով, մի մասն էլ կարծում է, որ Թորոսյանը չի մարսում իր պաշտոնավարման օրոք կորոնավիրուսի դեմ պայքարի շրջանակներում տեղի ունեցած վերջին բացահայտումները: Ամեն դեպքում, մեր տեղեկություններով՝ այս դեպքում գործընթացին դեռ stop է տրված, բայց չի բացառվում, որ առաջիկայում կրկին օրակարգ գա Թորոսյանին կալանավորելու հարցը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝Հակակոռուպցիոն կոմիտեն հարցաքննության է հրավիրել Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Արշալույս Փայտյանին: Իսկ ի՞նչն է պատճառը: Դատախազությունը օրերս գրել էր, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2011 թվականի հուլիսի 22-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով, խախտելով մի շարք օրենսդրական պահանջներ ու կարգավորումներ, ուղղակի վաճառքի եղանակով Դավիթ Բեկ փողոցի 155/3 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 12.500 քմ հողամասը 87 մլն դրամով վաճառել է ՋՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ-մայոր Ա.Փ-ին: Պարզվել է, որ Ա.Փ.-ն 2012 թվականի փետրվարի 3-ին վերոնշյալ հողամասը գրավադրել է 300 հազար ԱՄՆ դոլարով՝ ձեռք բերման գնից շուրջ 40 մլն դրամով թանկ (կողմերի համաձայնությամբ՝ հողամասը գնահատվել է 166 մլն 100 հազար դրամ): Այնուհետեւ՝2012 թվականի դեկտեմբերի 26-ին, Դավիթ Բեկ փողոցի 155/3 հասցեում գտնվող 12.500 քմ հողամասը գրավադրվել է 270 հազար ԱՄՆ դոլարով (հողամասը գնահատվել է 227 մլն 500 հազար դրամ լիկվիդացիոն գնով կամ ձեռք բերման գնից 140 մլն 500 հազար դրամ ավելի) եւ 824 հազար 498 ԱՄՆ դոլար պարտքի դիմաց (համարժեք է 342 մլն 373 հազար 143 դրամին) հանձնվել է բանկին՝որպես սեփականություն: Արդյունքում պետությանը պատճառվել է շուրջ 255 մլն 373 հազար 143 դրամի վնաս: Նկատի ունենալով, որ ուսումնասիրությամբ պարզված հանգամանքներն առերեւույթ պարունակում են Քրեական օրենսգրքով նախատեսված արարքի հատկանիշներ՝դատախազությունը 2023 թվականի մայիսի 5-ին ուսումնասիրության արդյունքներն ուղարկել է Հակակոռուպցիոն կոմիտե՝քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար. հարուցվել է քրեական վարույթ: Եվ, ահա, Ա.Փ-ն, ոչ ավել, ոչ պակաս, 2012 թվականին բանակին գոմեշի միս մատակարարելու եւ մեծ վնաս հասցնելու համար պաշտոնից ազատված, ՊՆ ԳՇ պետի նախկին տեղակալ Արշալույս Փայտյանն է, որին հիմա կրկին հիշել են իրավապահները:

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՆՐԱ ԼԵԶՈՒՆ Է ԱՆՈՐՈՇ, ԱՅՆՊԵՍ ԷԼ՝ ՄԻՏՔԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերջերս ԱԺ ամբիոնից հերթական անհասկանալի հայտարարությունն արեց՝ ասելով, թե մենք 30 տարի ապրում ենք մի երկրում, որը «կադաստրի վկայական» չունի. «Հայաստանը՝ որպես պետություն, իր բազմահազարամյա գոյության ընթացքում երբեք «կադաստրի վկայական» չի ունեցել: Եթե այն, ինչ որ մենք ուզում ենք անել, ստացվի, մենք պատմության մեջ առաջին անգամ կստանանք «կադաստրի վկայական»»,-հայտարարել է Փաշինյանը: Ըստ էության, Փաշինյանն իր այս հայտարարությամբ ոչ միայն կասկածի տակ է դնում Հայաստանի գոյությունը՝ որպես իրավական պետության, այլեւ հերթական անգամ հիմք է տալիս Ադրբեջանին, որպեսզի նոր տարածքային պահանջներ ներկայացնի Հայաստանին:

ArmLur.am-ը այս առիթով զրուցել է ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի առաջին փոխնախագահ, ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արա Սահակյանի հետ:

-Պարոն Սահակյան, ինչպե՞ս կմեկնաբանեք Փաշինյանի այս հայտարարությունը, ի՞նչ ասել է երկրի «կադաստրի վկայական, այսքան տարի ո՞ւմ տարածքում ենք ապրել:

-Անհաջող արտահայտություն է, խոտան: 5 տարի շարունակ նա վարժեցնում է մեր ժողովրդին իր արտառոց մտածողությամբ եւ դրան համապատասխան խոսույթով: Սկզբում դա միայն ՀԺ-ն առաջնորդողների լեզուն էր, հիմա իշխող խմբակի լեզուն է, շուտով կդառնա Հայաստանի՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցության լեզուն: Դա պարադոքսների լեզու է՝ հակասական եւ չճշգրտված հասկացություններով, որի նպատակը ցանկացած ժամանակ հարմար մեկնաբանությամբ երեւույթները ներկայացնելն է: Այս ամենը խոսում է այն մասին, որ ինչպես նրա լեզուն է անորոշ եւ խճճված, այնպես էլ՝ միտքը, մտածողությունը: Երբեմն նա այնպիսի քայլերի է դիմում, ինչպես, օրինակ, «երկրի կադաստրի վկայական» արտահայտությունը, որը հիմա փորձում են ներկայացնել, թե փոխաբերական իմաստով է ասել: Երբեմն մտածում ես, թե գործ ունես մտածողության բացակայության հետ:

-Պարոն Սահակյան, արդյոք այս հայտարարությամբ Փաշինյանը կասկածի տակ չի՞ դնում Հայաստանի գոյությունը՝ որպես իրավական պետության, եւ հիմք չի՞ տալիս, որ Ադրբեջանը նոր տարածքային պահանջներ ներկայացնի:

-Թուքական աշխարհում կա հոսանք, որը կասկածի տակ է դնում հայկական պետության գոյությունը, ադրբեջանցիները՝ ավելի շատ: Նրանք ասում են՝ ձեր հայրենիքը Հայկական բարձրավանդակում է, դուք հիմա եկել եք մեր հողերը: Նրանք մեզ այնտեղից քշեցին, բերեցին մեր տարածքների հյուսիսային այս փոքր կտորի վրա, ադրբեջանցիներն էլ մեզ դեռեւս վերբալ քշում են դեպի հարավ: Այլ կերպ ասած, քոչվորի ճակատագիր են թուրքական եկվորները մեզ համար նախատեսել, ու հանկարծ ՀՀ-ն հայտնվում է մի մարդու գերիշխանության ներքո, որը ներսից հաստատում է թուրքական ագրեսիան մեր նկատմամբ. աշխարհում սա անկրկնելի բան է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

«Խորհրդարանում հյուրընկալեցի Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պրն Յուն Ֆանին»,- հայտնել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Խոսեցի Հաայաստանի եւ Արցախի անվտանգային խնդիրների մասին: Ականատեսի աչքերով ներկայացրի Սոթքում շարունակ լարվածությունը, կրակոցները, որոնց հետեւանքով հայկական կողմն ունի զոհեր, երկու անգամ թիրախավորվեցին շտապօգնության ավտոմեքենաները, իսկ Սոթքի ոսկու հանքավայրի 800 աշխատակիցներ մինչ օրս պարապուրդի են մատնված:

Պարոն դեսպանի հետ զրույցում հիշատակեցի Բրյուսելում տեղի ունեցած Միշել-Փաշինյան-Ալիեւ եռակողմ հանդիպման արդյունքների մասին՝ նշելով, որ Փաշինյանը (նաեւ երեւանյան ասուլիսի ժամանակ) ճանաչել է Խորհրդային Ադրբեջանի տարածքը՝ Արցախով, այնինչ այդպիսի պետություն այժմ գոյություն չունի, քանի որ ժամանակակից Ադրբեջանը սովետական Ադրբեջանի իրավահաջորդը չի հանդիսանում:

Ընդգծեցի, որ ՀՀ գերագույն խորհրդի՝ 1992թ. հուլիսի 8-ի որոշման մեջ գրված է. «Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»: Հետեւաբար ցանկացած նմանատիպ փաստաթուղթ եթե ստորագրվի, կունենա լեգիտիմության լրջագույն խնդիր:

Պատմեցի իմ նախաձեռնությամբ իրականացվող «Ոչ Արցախի էթնիկ զտմանը» ստորագրահավաքի ընթացքի եւ արդյունքների մասին: Նշեցի, որ արդեն հավաքվել է 300 հազարից ավելի ստորագրություն, որով փաստվում է՝հայ ժողովրդի համար անընդունելի է Նիկոլ Փաշինյանի կողմից Արցախն Ադրբեջանի տարածք ճանաչելու ցավալի իրողությունը:

Պարոն Ֆանին ներկայացրի Հայաստանում ժողովրդավարության լրջագույն խնդիրները՝ հիշատակելով իշխանության ներկայացուցիչների կողմից իմ եւ մյուս պատգամավորների նկատմամբ կիրառված ոչ իրավաչափ գործողությունների մասին:

Երկուստեք պատրաստակամություն հայտնեցինք խորացնելու համագործակցության շրջանակները, եւ այս համատեքստում ընդգծեցի, որ մեզ համար կարեւոր է զարգացող տնտեսություն ունեցող Չինաստանի փորձն ուսանելը»:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Մայիսի 26-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է ԱՄՆ Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Լուիս Բոնոյին:

Այս մասին տեղեկացնում է ԱԳՆ-ն:

Զրուցակիցները քննարկել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացը, անդրադարձել են այդ ուղղությամբ վերջին շրջանում անցկացված բանակցություններում քննարկված եւ դեռ փոխհամաձայնեցման ենթակա հարցերին:

Արարատ Միրզոյանը վերահաստատել է հայկական կողմի՝ տարածաշրջանում համապարփակ ու երկարատեւ խաղաղության հաստատման հանձնառությունը: Նախարարն ընդգծել է, որ այդ ուղղությամբ, ի թիվս այլ հարցերի, առանցքային է ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից հրաժարումը, հստակ սահմանների ամրագրումն ու սահմանային անվտանգության ապահովումը, միջազգայնորեն երաշխավորված երկխոսության մեխանիզմի ներքո Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքների եւ անվտանգության խնդիրների հասցեագրումը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԱՄՆ Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Լուիս Բոնոյին:

Զրուցակիցները քննարկել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացին, Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամին, միջազգայնորեն երաշխավորված երկխոսության մեխանիզմի ներքո Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքների եւ անվտանգության խնդիրների հասցեագրմանը վերաբերող հարցեր:

Վարչապետը ներկայացրել է առկա առանցքային խնդիրների կարգավորման հարցում հայկական կողմի մոտեցումները:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՉՃԱՆԱՉԵԼԸ ԱՆՀԵՌԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը չորեքշաբթի օրը ԱԺ ամբիոնից հերթական անհասկանալի հայտարարությունն արեց՝ ասելով, թե մենք 30 տարի ապրում ենք մի երկրում, որը «կադաստրի վկայական» չունի:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ խմբակցության պատգամավոր Նարեկ Բաբայանը նշում է՝ վարչապետի ասածը վերացական էր. պետք չէ դա դարձնել ռեալիստական:

«Խոսքը նրա մասին է, որ եթե մենք չենք ճանաչում Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապա իրենք էլ մեր սահմանները չեն ճանաչելու. այ սրա մասին է խոսքը: Եթե մենք այնքան խելամտություն չունենանք, որ ճանաչենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ կոնկրետ սահմանները, ապա սա արձակում է նրանց ձեռքերը՝ անելու այն, ինչը որ կուզեին անել, եւ էսքանը չհասկանալը, շատ մեղմ ասած, անհեռատեսություն է»,- ասաց Բաբայանը:

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՀ վիճակագրության կոմիտեի տվյալներով՝ այս տարվա հունվար-ապրիլին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 12,2 տոկոս: Նույն տվյալների համաձայն՝ արդյունաբերությունն աճել է 2.4 տոկոսով, շինարարությունը՝ 16,8 տոկոսով, առեւտուրը՝ 23.2 տոկոսով, իսկ ծառայությունների ոլորտը՝22,2 տոկոսով:

Տեղեկացանք, որ արտաքին առեւտրաշրջանառությունը առաջին 4 ամիսներին աճել է գրեթե կրկնակի՝99,4 տոկոսով: Արտահանումն աճել է ավելի քան կրկնակի՝109,4 տոկոսով, իսկ ներմուծումը՝93,9 տոկոսով:

Սպառողական գների ինդեքսը (գնաճը) կազմել է 6,2 տոկոս:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԹԵԺ Է ԼԻՆԵԼՈՒ

Թեեւ երեկ ԱԺ նիստերն ավարտվեցին, օրակարգը սպառվեց, բայց երկուշաբթի օրը խորհրդարանում բավականին թեժ է լինելու: Այդ օրը վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ կառավարության անդամները կգան խորհրդարան:

Ազգային ժողովի համատեղ նիստերում կքննարկվի ՀՀ 2022 թվականի պետբյուջեի կատարողականը:

Այսպիսով, երկուշաբթի օրը խորհրդարան կգան վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱԱԾ տնօրեն Արմեն Աբազյանը, ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը, ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը, ֆինանսների նախարար Վահե Հովհաննսիյանը, ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը, Հաշվեքննիչ պալատի նախագահ Ատոմ Ջանջուղազյանը, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյանը, ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյանը, ԲՏԱ նախարար Ռոբերտ Խաչատրյանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿԱՐՈՂ Է ՍՏՈՐԱԳՐՎԵԼ

Ներկայացնում ենք մանրամասներ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումից: Պուտինն իր խոսքում ընդգծել է կարեւորությունը, որ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն է եղել: «Կարծում եմ, որ, ամեն դեպքում, տարածաշրջանային տնտեսական կապերի զարգացման տեսանկյունից դա օգտակար է, դա լրացուցիչ հարթակ եւ երկխոսության հնարավորություն է ստեղծում այն ոլորտներում, որոնք ոչ մի կասկածի տեղիք չեն տալիս», - նշել է նա:

Խոսելով Ղարաբաղի շուրջ կարգավորման գործընթացից՝ ՌԴ նախագահը նշել է, որ հարցերը շատ կարեւոր են եւ զգայուն: «Համոզված եմ, որ եթե, ի վերջո, ի հեճուկս բոլոր դժվարությունների՝ հասնենք այդ հարցերի լուծմանը, ապա դա անկասկած օգուտ կբերի եւ՛ Հայաստանին, եւ՛ Ադրբեջանին, եւ ոչ միայն երկու երկրներին, այլեւ ողջ տարածաշրջանին, քանի որ շատ պետություններ շահագրգռված են դրանում, եւ դա կնպաստի հարաբերությունների կարգավորմանը բոլոր ուղղություններով, այդ թվում՝ քաղաքական՝ այդ տարածքում բնակվող մարդկանց անվտանգության ապահովման առումով», - հավելել է նա:

Իր հերթին վարչապետ Փաշինյանը նշել է. «Շատ շնորհակալ եմ Վլադիմիր Վլադիմիրի: Եվս մեկ անգամ շնորհակալություն ջերմ ընդունելության համար: Իսկապես, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստն անցավ բարձր մակարդակով: Մենք քննարկել ենք հարցերի լայն շրջանակ: Տարածաշրջանային իմաստով, իհարկե, մենք բավական լարված իրավիճակ ունենք Լեռնային Ղարաբաղում՝ Լաչինի միջանցքում. այդ մասին մենք այսօր բազմիցս խոսել ենք: Ցավոք, ի հեճուկս 2020 թ-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության՝ Ադրբեջանն ապօրինի արգելափակել է Լաչինի միջանցքը, ինչի պատճառով Լեռնային Ղարաբաղը հայտնվել է հումանիտար ճգնաժամի մեջ: Դուք գիտեք, որ դադարեցվել է նաեւ բնական գազի եւ էլեկտրաէներգիայի մատակարարումը Լեռնային Ղարաբաղ, արգելափակվել է Ադրբեջանի կողմից, ինչը սրում է հումանիտար իրավիճակը Լեռնային Ղարաբաղում: Լեռնային Ղարաբաղ սննդամթերքի եւ ապրանքների մատակարարումները բարդացել են: Իհարկե, ռուս խաղաղապահներն աջակցում են այս հարցում, բայց, ցավոք, ինչպես ասացի, Լաչինի միջանցքի արգելափակումը տեղի ունեցավ ռուս խաղաղապահների ներկայությամբ»,- նշել է նա:

Միեւնույն ժամանակ, նշվում է, թե Հայաստանն ու Ադրբեջանը կարող են խաղաղության պայմանագիրը ստորագրել հաջորդ շաբաթ, երբ առաջնորդները հանդիպեն եվրոպական գագաթնաժողովի շրջանակներում. «Ռոյթերզ»-ին է փոխանցել Ֆրանսիայում Ադրբեջանի դեսպանը:

«Հույս ունենք, որ հունիսի 1-ին Քիշնեւում վերջապես կստորագրվի խաղաղության պայմանագիրը: Սա պատմական պահ է, որը չի կարելի բաց թողնել»,- ասել է Լեյլա Աբդուլաեւան:

Պաշտոնական Երեւանը դեռ չի արձագանքում:

Հավելենք, որ Եվրոպական քաղաքական համայնքի քիշնեւյան գագաթնաժողովին կմասնակցեն ավելի քան մի քանի տասնյակ պետությունների ղեկավարներ եւ եվրոպական կառույցների բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ Եվրամիության եւ եվրոպական 17 այլ երկրներից:

Գագաթնաժողովի շրջանակներում սպասվում է հնգակողմ հանդիպում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի եւ Ֆրանսիայի նախագահ Էմանյուել Մակրոնի ու Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի մասնակցությամբ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՏ Է

ԱՄՆ Պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերն անդրադարձել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությանը՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչման վերաբերյալ՝ ողջունելով այն:

«Գնահատում ենք Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի վերջին մեկնաբանությունը Հայաստան-Ադրբեջան տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման ու խաղաղությանը շարունակական հավատարմության վերաբերյալ: Վերջնական համաձայնությունը մոտ է, եւ մենք վճռական ենք մեր ընկերներին օգնելու հասնել դրան»,- գրել է Պետքարտուղարության խոսնակը թվիթերյան իր էջում:

Հիշեցնենք՝ ՀՀ վարչապետը մայիսի 24-ին՝ ԱԺ-ում հարցուպատասխանի ժամանակ, հայտարարել էր. «Ես, այո՛, հիմա այս ամբիոնից հայտարարում եմ, որ Հայաստանը վերահաստատում է Բրյուսելում արձանագրված պայմանավորվածությունը, որ ՀՀ-ն ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն ու ակնկալում, որ Ադրբեջանն էլ կվերահաստատի, որ ճանաչում է ՀՀ տարածքային ամբողջականությունը»:

Արձագանքելով քննադատություններին՝ Նիկոլ Փաշինյանը պարզաբանել էր, թե Հայաստանն ինչու է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչում 86.600 ք/կմ տարածքով. «Առաջինը՝ ճանաչել ենք 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագիրը, երկրորդը՝ վերահաստատումն է Պրահայում Ալմա-Աթայի հռչակագրի, երրորդ քայլը տարածքների կոնկրետ նշագրմամբ փոխադարձ ճանաչումն է Բրյուսելում»:

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Մեկ շաբաթից Հայաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետների հետ կքննարկենք տեխնիկական մանրամասները, բայց դրանք շատ կարեւոր մանրամասներ են»,- հայտարարել է Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը:

Նրա խոսքով՝խոսքն Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ սահմանը հատելու ընթացակարգի մասին է:

Հիշեցնենք, որ Պուտինը երեկ ասել էր, որ մեկ շաբաթից Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի կառավարությունների փոխվարչապետները կհանդիպեն եւ կհանեն «չմաքրված հարցերը»:

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾ

ԴԱՏԱՎՃԻՌԸ ՄԱՍՆԱԿԻ ԲԵԿԱՆՎԵԼ Է

Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու հատկանիշներով հարուցված քրեական գործով դատախազի բողոքը Վերաքննիչ քրեական դատարանը մասնակի բավարարել է, իսկ Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը՝ մասնակի բեկանել: Փոխվել են գործով որպես մեղադրյալներ ներգրավված Ա.Բ.-ի, Ս.Գ.-ի, Ս.Բ.-ի, Կ.Ե.-ի նկատմամբ նշանակված պատիժները. տեղեկացնում են ՀՀ գլխավոր դատախազությունից:

Ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում քննված քրեական գործով (վարույթով) հիմնավորվել է, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին՝ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ժամանակ, մարտական տարբեր խնդիրներ լուծելու համար Արցախի Հանրապետության ոստիկանության աշխատակից, բաժնի պետի տեղակալ Ա.Բ.-ն մեկնել է իրեն հանձնարարված տարածք, Ջրականի տարածքից ապօրինի ձեռք է բերել գործարանային արտադրության «ԱԿ» եւ «ԱԿՄ» տեսակի 45 ինքնաձիգ, տարբեր տրամաչափի զինատեսակներից կրակելու համար նախատեսված 2000-ից ավելի փամփուշտ եւ այլ ռազմամթերք:

Այնուհետեւ, համաձայնության գալով իր ծանոթ Ս.Գ.-ի հետ, վերջինիս բնակարանին կից օժանդակ կառույցում պահել է ապօրինի փոխադրած ռազմամթերքն ու 43 ինքնաձիգները դրանք հետագայում իրացնելու նպատակով: 45 ինքնաձիգից երկուսը փոխանցվել է Երեւան քաղաքի բնակիչ Ս.Բ.-ին, որը դրանք փոխադրել եւ պահել է իր փաստացի բնակության վայրում:

Այնուհետեւ Ս.Բ.-ն պայմանավորվածություն է ձեռք բերել Կ.Ե.-ի հետ, որպեսզի վերջինս վաճառի ինքնաձիգները, յուրաքանչյուրը՝148 հազար 782 դրամին համարժեք 300 ԱՄՆ դոլարով, եւ ստացված գումարը փոխանցի Ա.Բ.-ին: Պարզվել է նաեւ, որ Ս.Բ.-ն, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին գտնվելով Արցախի Հանրապետությունում, գործով դեռեւս չպարզված հանգամանքներում ձեռք է բերել ռազմամթերք հանդիսացող ընդհանուր 400-ից ավելի փամփուշտ, դրանք փոխադրել եւ պահել է Երեւան քաղաքում: ԱԱԾ աշխատակիցները խուզարկության ժամանակ հայտնաբերել եւ վերցրել են փամփուշտները:

Ա.Բ.-ի կողմից պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու հետեւանքով մարտական գործողությունների ընթացքում եւ դրանից հետո շուրջ չորս տասնյակից ավելի զինծառայող զրկվել է իրենց ամրակցված հրազենները եւ ռազմամթերքը կիրառելու միջոցով մարտական խնդիրներ լուծելու հնարավորությունից: Ա.Բ.-ին մեղադրանք է առաջադրվել 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի (այսուհետ՝Քրեական օրենսգիրք) 235-րդ հոդվածի 2-րդ մասով (նախնական համաձայնությամբ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, կրելը) եւ 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ), Ս.Բ.-ին՝235-րդ հոդվածի 1-ին մասով (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, կրելը) եւ 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Ս.Գ.-ին՝ 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Կ.Ե.-ին՝ 34-235-րդ հոդվածի 1-ին մասով (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու, կրելու փորձ): 2021 թվականի հոկտեմբերի 15-ին դատախազը քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկել է Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը վերաորակվել է նույն հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը), եւ 2021 թվականի հունիսի 8-ին Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը Ա.Բ.-ին մեղավոր է ճանաչել՝ 308-րդ հոդվածի 1-ին մասով (նշանակվել է պատիժ՝ պետական պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկում՝ 5 տարի ժամկետով) եւ 235-րդ հոդվածի 2-րդ մասով (նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 3 տարի ժամկետով): Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով Ս.Գ.-ին մեղսագրվող արարքը վերաորակվել է նույն հոդվածի 1-ին մասով, եւ Ս.Գ.-ի նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 1 տարի ժամկետով: Պատիժը պայմանականորեն չի կիրառվել, եւ սահմանվել է փորձաշրջան՝ 2 տարի ժամկետով:

Ս.Բ.-ն մեղավոր է ճանաչվել՝ Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով (նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 6 ամիս ժամկետով) եւ 235-րդ հոդվածի 2-րդ մասով (նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 2 տարի ժամկետով): Դատարանը Կ.Ե.-ին արդարացրել է Քրեական օրենսգրքի 34-235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում: Դատախազի բողոքի հիման վրա՝ Վերաքննիչ քրեական դատարանը 2023 թվականի մարտի 6-ին որոշում է կայացրել ներկայացված բողոքը մասնակի բավարարելու եւ Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը մասնակի բեկանելու մասին:

Արդյունքում, դատախազի բողոքի հիման վրա, դատարանի բեկանված դատավճռով՝ Ս. Բ.-ն մեղավոր է ճանաչվել՝ Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով եւ 235-րդ հոդվածի 2-րդ մասով: Նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 1 տարի ժամկետով, իսկ 235-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկում՝2 տարի 6 ամիս ժամկետով:

Վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝3 տարի ժամկետով: Ս. Գ.-ն մեղավոր է ճանաչվել Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով: Նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 2 տարի 6 ամիս ժամկետով: Քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, եւ սահմանվել է փորձաշրջան՝3 տարի ժամկետով:

ԽՆՋՈՒՅՔՆԵՐ

ԲԱՆԱՎԵՃԻ ԹԵՄԱՆ ԹՄՐԱՆՅՈՒԹՆ Է

Մայիսի 3-ին Ազգային ժողովում ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը հայտարարել էր, որ որեւէ միջին վիճակագրական խնջույք առանց թմրանյութերի չի անցնում, եւ հարց էր ուղղել ՆԳ նախարար Վահե Ղազարյանին, թե ինչով է պայմանավորված այն հանգամանքը, որ ոստիկանական ռեյդերն անցկացվում են որոշակի ենթամշակութային առանձնահատկություն ունեցող ժամանցի վայրերում:

Ի պատասխան՝ Վահե Ղազարյանը նշել էր, որ իրենք օպերատիվ ստացված տվյալների հիման վրա են ռեյդեր իրականացնում եւ ուղղակի պարտավոր են արձագանքել այդ օպերատիվ տեղեկություններին. «Դրանով մենք մեծ խոչընդոտ չենք հանդիսացել տվյալ տնտեսվարողին:

Ինձ թվում է՝ մենք կատարել ենք մեր գործառույթները, կարեւորը մենք ունենք արդյունք. այ եթե չունենային արդյունք, դա հարցի մյուս կողմն է»,- ասել էր նա՝ ընդգծելով, որ ոստիկանության գործողությունների իրավաչափության հարցով գործընթաց կա:

Ավելին՝ ԱԱԾ-ն 1 տոննա հերոին Հայաստան ներմուծելու մասին հայտնեց:

ՀՀ վարչապետի աներորդի, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հրաչյա Հակոբյանից «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց, թե վերջին անգամ երբ է խնջույքի մասնակցել եւ ինչ թմրանյութ է օգտագործել.

«Վերջին անգամ խնջույքի մասնակցել եմ երեւի ընկերներիցս մեկի ծննդյան արարողությանը մոտ մեկ ամիս առաջ: Խնջույքի ժամանակ թմրանյութ չկար ու չեմ օգտագործում»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզերը ստացած տեղեկությունն իրացրին Երեւան քաղաքի վարչության գործընկերների հետ: Մայիսի 24-ին՝ ժամը 18-ին, մայրաքաղաքի Բագրատունյաց փողոցում նրանք ձերբակալեցին եւ բաժին տեղափոխեցին անցած տարվա նոյեմբերից ոստիկանության Ապարանի բաժնի կողմից սպանության մեղադրանքով հետախուզվող 33-ամյա մի տղամարդու:

Դեպքը տեղի էր ունեցել 2022 թվականի հունիսի 19-ին: Արագածոտնի մարզի Նիգավան գյուղ տանող ճանապարհի դաշտամիջյան տարածքում ծագած վիճաբանության ժամանակ 33-ամյա տղամարդն ու ընկերը, երկուսն էլ՝ զինված որսորդական ողորկափող հրացաններով, կյանքից զրկելու դիտավորությամբ բազմաթիվ կրակոցներ էին արձակել մի խումբ անձանց ուղղությամբ: Միջադեպին զոհ էր գնացել երեք անձ, եւս չորս հոգի հրազենային վնասվածքներով տեղափոխվել էին հիվանդանոց:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված տարաբնույթ միջոցառումների արդյունքում առանձնապես ծանր հանցագործությունը բացահայտվել էր, ճշտվել էին վիճաբանության դրդապատճառներն ու մասնակիցների ինքնությունը, յուրաքանչյուրի մասնակցության չափը: Կրակողներից մեկը հայտնաբերվել էր, իսկ Երեւանում հաշվառված 33-ամյա տղամարդը խուսափել էր քննությունից:

Լրացվեց եւ այդ բացը:

Նախաքննությունը շարունակվում է:

ՊԱՐԵԿՆԵՐԸ՝ ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՅՈՎ

Էլեկտրական ինքնահավասարակշռվող սեգվեյներ, մոտոցիկլետներ եւ էլեկտրամոբիլներ. պարեկներն արդեն շուրջօրյա ծառայություն իրականացնում են նաեւ տեխնիկական նոր միջոցներով:

Ինչպես հայտնում է ՀՀ ոստիկանությունը, ինքնահավասարակշռվող սեգվեյների կիրառումը հետիոտն կարգախմբին հնարավորություն է տալիս առավել արդյունավետ կազմակերպել ծառայությունը, ուշադրության կենտրոնում պահել եւ օպերատիվորեն արձագանքել ցանկացած իրավիճակի: Սեգվեյներով ծառայությունը հատկապես մարդաշատ վայրերում նպաստում է հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման խնդիրների պատշաճ իրականացմանը:

Դրան զուգահեռ՝ պարեկները ճանապարհային երթեւեկության անվտանգությունն ապահովում են նաեւ մոտոցիկլետներով եւ էլեկտրամոբիլներով: Հատկապես երթեւեկության ծանրաբեռնվածության պայմաններում մոտոցիկլետների կիրառումը, շնորհիվ փոքր չափերի եւ հարմարավետության, լուծում է իրավիճակային խնդիրներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 25-ից 26-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 42 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

Ո՞Վ ԷՐ ԿԱԽՎԱԾ ԱՂՋԻԿԸ

Մայիսի 25-ին՝ Ժամը 02:25-ի սահմաններում, ոստիկանության Իջեւանի բաժին ահազանգ է ստացվել, որ Իջեւան խոշորացված համայնքի սահմանամերձ Սեւքար գյուղի եկեղեցուն հարակից «Եղեւնիներ» վայրում ծառից կախված դի կա: Ոստիկաններն ու քննիչները ծառից կախված հայտնաբերել են 17-ամյա Սյուզաննա Տ-ի դին. աղջկա մոտ հայտնաբերվել է նամակ՝ ուղղված մորը: Սեւքար գյուղից տեղեկացա, որ ծառից կախված աղջիկը ընտանիքի 7 զավակներից մեկն էր, ընտանիքի հայրը ազգությամբ վրացի է, մայրը՝ հայ, ընտանիքի երեխաները կրում են վրացական ազգանուն: Ընտանիքը Սեւքար գյուղում վերաբնակվել է Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանց գյուղից, բարեգործները բազմազավակ այդ ընտանիքի համար Սեւքարում առանձնատուն եւ տան գույք են գնել: Ընտանիքի 7 երեխաներից ավագը աղջիկ է, որն ամուսնացել է Իջեւան համայնքի գյուղերից մեկում: Սյուզաննան եղել է ամուսնացած քրոջից տարիքով փոքր, ընտանիքի մյուս երեխաներից՝տարիքով մեծ: Սյուզաննան օգնել է բազմազավակ, կարիքավոր ընտանիքի հոգսերը լուծելուն, մանավանդ որ ընտանիքի 7 երեխաներից մեկը եղել է մանկահասակ: Ընտանիքի վրացի հայրը բանվորական աշխատանքներ է կատարել Ռուսաստանում, հետո վերադարձել է Սեւքար: Ընտանիքի մայրն էլ տարբեր աշխատանքներ է կատարել, որոշ տեղեկություններով՝ սննդի օբյեկտներում մատուցող է աշխատել: Սյուզաննան դպրոցում միջին առաջադիմություն է ունեցել, նա 2021 թվականին թողել է ուսումը Սեւքարի դպրոցում: Աղջկա ինքնասպանության պատճառը պարզ կդառնա քննության ավարտից հետո:

ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է

2023թ. մարտի 9-ին ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ Առնակ Ավետիսյանը Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ գյուղում գործող «Դեբեդ ավտոտեխսպասարկում» ՍՊԸ-ի՝ գումար բռնագանձելու, պայմանագիրը լուծելու եւ պայմանագրի առարկա հանդիսացող անշարժ գույքը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու պահանջներով: Մայիսի 2-ին Իջեւան քաղաքում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ Սարգիս Արմենակյանը որոշել է նշված քաղաքացիական գործով նախնական դատական նիստ նշանակել հունիսի 13-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում: Դատարանը մերժել է քաղաքացիական գործով հայցվորի ներկայացրած միջնորդությունը՝ պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելու վերաբերյալ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ԴԵՊՔԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳ վարչությունում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ մի շարք անձինք, հաշվառված լինելով ՀՀ ԶՈՒ պահեստազորում, խուսափում են մասնակցել ՀՀ կառավարության որոշումներով 2022 թվականից պարբերաբար հայտարարվող՝ ռազմական ունակությունների կատարելագործմանը, մասնագիտական վերապատրաստմանը եւ պատրաստմանն ուղղված վարժական հավաքներից:

Մասնավորապես, ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայությունից (ԶՀԾ) ստացված հաղորդումների առթիվ նախաձեռնված քրեական վարույթներով իրականացվող քննությամբ պարզվում է, որ պահեստազորում ընդգրկված անձինք, ստանալով համապատասխան հրավեր, ներկայանում են ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ՝ իրենց կցագրման տարածքային ստորաբաժանումներ, որտեղ պատշաճ կերպով ծանուցվում են հայտարարված վարժական հավաքներում ընդգրկված լինելու մասին, սակայն հրաժարվում են ստանալ դրանց մասնակցելու եւ վարժական հավաքի վայր մեկնելու ծանուցագրերը, ինչի մասին կազմվում են արձանագրություններ:

Որոշ դեպքերում անձինք ստանում են ծանուցագրերը, սակայն սահմանված օրը եւ ժամին, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայությունից ազատվելու հիմքերի բացակայության պայմաններում, չեն ներկայանում ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ տարածքային ստորաբաժանումներ՝ այդկերպ խուսափելով վարժական հավաքներից:

Բացի այդ, շրջանառվում է նաեւ վարժական հավաքներից խուսափելու առերեւույթ հանցանքի կատարման նոր եղանակ, համաձայն որի՝ վարժական հավաքների ներգրավման ենթակա քաղաքացիները ձեւականորեն որպես վարձու աշխատակիցներ են ձեւակերպվում այնպիսի ընկերություններում կամ հիմնարկ- ձեռնարկություններում, որոնց աշխատակիցներն օրենքի ուժով ունեն ամրագրում, այսինքն, աշխատանքի բնույթով պայմանավորված, ենթակա չեն վարժական հավաքների ներգրավման: Ուսումնասիրության համաձայն՝ վարժական հավաքների անցկացման սկզբից ի վեր՝ 2022-2023 թվականների ընթացքում, ՀՀ ՔԿ ԶՔԳՎ կայազորային քննչական բաժիններում ստացվել է վարժական հավաքներից խուսափելու առերեւույթ դեպքերի առթիվ ընդհանուր 160 հաղորդում, որոնցով նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Նշված վարույթներով քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր 45 անձի նկատմամբ: 24 անձի վերաբերյալ քրեական վարույթներ՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին: Նշված քրեական վարույթներով մեղադրական եզրակացությունները հաստատվել են, եւ գործերն ուղարկվել են դատարան:

Քրեական վարույթների մի մասով դեռեւս նախաքննությունը շարունակվում է:

ՀՀ քննչական կոմիտեն հատկապես պահեստազորում հաշվառված անձանց տեղեկացնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում վարժական հավաքներից խուսափելը հանցագործություն է, որը պատժվում է ընդհուպ մինչեւ 2 տարի ժամկետով ազատազրկմամբ:

Հարկ է ընդգծել, որ վարժական հավաքների ենթակա անձանց վերոնշյալ բնույթի ընկերություններում կամ հիմնարկներում ձեւականորեն որպես վարձու աշխատակիցներ ձեւակերպելու պարագայում քրեաիրավական հետեւանքներ են առաջանում ոչ միայն այդկերպ վարժական հավաքից խուսափողների, այլ նաեւ տվյալ հիմնարկ-ձեռնարկության ղեկավարի համար՝ որպես արարքին օժանդակողի:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաեւ հաշվի առնելով ՀՀ զինված ուժերի մարտունակության բարձրացման, պետության անվտանգության համար վարժական հավաքների եւ դրանց բնականոն կազմակերպման եւ իրականացման բացառիկ կարեւոր նշանակությունը՝ ՀՀ քննչական կոմիտեն հետամուտ է լինելու վարժական հավաքներից դիտավորությամբ խուսափելու յուրաքանչյուր դեպքի համաչափ իրավական գնահատական տալու, իր պարտականությունների կատարումից հանցավոր կերպով հրաժարվող, ինչպես նաեւ ցանկացած եղանակով այդ արատավոր երեւույթն օժանդակող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը մայիսի 25-ին ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Նիկոլաս Մխերմերսին:

Պաշտպանը հյուրին ներկայացրել է սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքների պաշտպանությանը, Լաչինի միջանցքի շրջափակման հետեւանքով առաջացած խնդիրներին, գտնվելու վայրն անհայտ զինծառայողներին վերաբերելի հարցեր: Նա հատուկ անդրադարձել է ադրբեջանական զինված ուժերի կողմից ՀՀ սահմանամերձ բնակավայրում մայիսի 17-ին շտապօգնության ավտոմեքենայի եւ բուժանձնակազմի թիրախավորմանը՝ ընդգծելով, որ դա միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի ակնհայտ խախտում է:

Խոսելով Նիդերլանդների հետ համագործակցության մասին՝ Անահիտ Մանասյանը կարեւորել է «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ի հետ 2022 թվականի նոյեմբերի 3-ին ստորագրված համագործակցության հուշագիրը, ըստ որի՝ կողմերն իրականացնում են «Ատելության խոսքի դեմ պայքար՝ հանուն ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության եւ հանդուրժողականության հաստատման» ծրագիրը, որը ֆինանսավորում է Թագավորության կառավարությունը:

Պաշտպանը դեսպանին ծանոթացրել է նաեւ կառույցի գործունեության առաջնահերթություններին, որոնց թվում են երեխաների, կանանց եւ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը, խտրականության բացառումը:

Իր հերթին դեսպանը, շնորհավորելով Անահիտ Մանասյանին Մարդու իրավունքների պաշտպան ընտրվելու առթիվ, ընդգծել է, որ շատ է կարեւորում դեսպանության եւ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության միջեւ արդյունավետ փոխգործակցությունը:

Հանդիպման շրջանակում կողմերը սերտ շփումները շարունակելու պայմանավորվածություն են ձեռք բերել:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

30 ՏԱՐՎԱ ՈՒՂԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԿԱԴԱՍՏՐԻ ՎԿԱՅԱԿԱՆ»-Ը

1990թ. օգոստոսի 23-ին Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդը ընդունեց 12 կետերից կազմված Հռչակագիր, որով սկիզբ դրվեց Հայաստանի անկախության իրավական գործընթացին: Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն, իսկ գործող 12-րդ գումարման Գերագույն խորհուրդը համարվեց Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ:

Հայաստանի անկախության մասին հռչակագիրը Հայաստանի Հանրապետության հիմնադիր փաստաթուղթն է եւ Հայաստանի Սահմանադրության հետ միասին նրա հիմնարար երկու փաստաթղթերից մեկը: Փաստաթուղթը Գերագույն խորհրդի նիստում ընթերցել է պատգամավոր Արամ Մանուկյանը, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինն օրհնել է քաղաքացիների որոշումը:

Հռչակագրից մեկ տարի անց՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ին, Հայաստանում անցկացվեց հանրաքվե. Հայաստանի ժողովուրդը ձայների ճնշող մեծամասնությամբ քվեարկեց ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալուն եւ իր քվեով «Այո» ասաց անկախ պետություն ստեղծելուն: Սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը, ամփոփելով հանրաքվեի արդյունքները, Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն: Հանրաքվեի արդյունքները խորհրդարանի բարձր ամբիոնից հրապարակեց Բաբկեն Արարքցյանը:

Հայաստանի Հանրապետությունն արդեն 1992թ. -ին պաշտոնապես դիմում է Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդին ՄԱԿ-ին իր անդամակցության դիմումը հաստատելու համար:

1992 թ. հունվարի 29-ին՝նիստի ժամանակ, Անվտանգության խորհուրդը քննարկում է Միավորված ազգերի կազմակերպության նոր անդամների ընդունման հանձնաժողովի զեկույցը՝ Հայաստանի Հանրապետության դիմումի վերաբերյալ:

1992 թ. մարտի 2-ին Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի լիիրավ անդամ:

Այսօր Հայաստանը 100-ից ավելի պետությունների կողմից ճանաչված ու ՄԱԿ-ի լիիրավ անդամ է:

Չնայած սրան՝ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերջերս ԱԺ ամբիոնից արած հայտարարությամբ կասկածի տակ դրեց Հայաստանի՝ որպես իրավական պետություն գոյության փաստը՝հայտարարելով, թե մենք 30 տարի է՝ ապրում ենք մի երկրում, որը «կադաստրի վկայական» չունի՝նկատի ունենալով այն, որ Ադրբեջանը չի ճանաչում ՀՀ տարածքային ամբողջականությունը:

Թերեւս հարց է առաջանում՝ ինչո՞ւ 100-ից ավելի պետությունների կողմից ճանաչված ու ՄԱԿ-ի լիիրավ անդամ Հայաստանը պետք է «կադաստրի վկայական» ստանա հենց Ադրբեջանից:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ջրային կոմիտեի նախագահ Վահագն Գեւորգյանն ընդունել է Ասիական զարգացման բանկի հայաստանյան գրասենյակի տնօրեն Պաոլո Սպանտիգատիի գլխավորած պատվիրակությանը:

Ջրային կոմիտեից հայտնում են, որ հանդիպմանը մասնակցել են նաեւ Ջրային կոմիտեի նախագահի տեղակալներ Կարեն Դաղբաշյանը, Մարտիրոս Նալբանդյանը, արտաքին կապերի բաժնի պետ Տիգրանուհի Բաղդասարյանը, ինչպես նաեւ ՀՀ-ում ԱԶԲ առաքելության տնտեսագիտության մասով ավագ պատասխանատու Գրիգոր Գյուրջյանը, ծրագրերի ավագ պատասխանատու Վարդան Կարապետյանը եւ գործառնությունների մասով օգնական Լիանա Առաքելյանը:

Ողջունելով հյուրերին՝ Վահագն Գեւորգյանը նշել է, որ Ասիական զարգացման բանկը մշտապես եղել եւ մնում է Ջրային կոմիտեի կարեւորագույն գործընկերներից մեկը:

Նախագահ Վահագն Գեւորգյանը ներկայացրել է փոքր եւ միջին ջրամբարաշինության ուղղությամբ իրականացված միջոցառումները: Իր խոսքում նախագահը նշել է, որ ակտիվ աշխատանքներ են ընթանում 15 ջրամբարի նախագծման ուղղությամբ, ինչպես նաեւ ներկայացրել է Կապսի, Վեդու ջրամբարների եւ ոռոգման համակարգի վերակառուցման ծրագրերի ընթացքը: Անդրադարձ է կատարվել նաեւ միջազգային համագործակցությամբ իրականացվող նախագծերին:

Կոմիտեի նախագահի խոսքով՝ նոր ջրամբարների կառուցումը թույլ կտա կուտակել լրացուցիչ ջրային ռեսուրսներ, բարձրացնել կառավարման արդյունավետությունը, բարելավել ոռոգելի հողատարածքների ջրամատակարարումը, հասնել էներգիայի խնայողության մեխանիկական ոռոգումն ինքնահոսով փոխարինելու արդյունքում:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Պաոլո Սպանտիգատին նշել է, որ Ասիական զարգացման բանկը պատրաստ է ցուցաբերել օժանդակություն Ջրային կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերին, ինչպես նաեւ ընդլայնելու հետագա երկկողմ համագործակցության շրջանակները:

Քննարկմանը հաջորդել է մտքերի փոխանակությունը՝ ջրային ռեսուրսների կառավարման համակարգերի բարելավման, ռազմավարական մոտեցումների հստակեցման, ըստ վերոնշյալ ուղղությունների իրականացվող ծրագրերի շրջանակներում հետագա համագործակցության շուրջ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւս:

Նախագահն ընդգծել է, որ Ջրային կոմիտեն հավատարիմ է մնալու իր հանձնառությանը եւ ամեն ինչ անելու է առկա եւ նոր ծրագրերը կյանքի կոչելու, Ասիական զարգացման բանկի հետ համագործակցությունն ավելի ընդլայնելու, ամրապնդելու եւ զարգացնելու գործում:

Team Telecom Armenia

25 Գբ/վ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ NGN ՑԱՆՑՆ ԱՐԴԵՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է

Team Telecom Armenia-ի գերհզոր NGN ցանցին արդեն հասանելիություն ունի հանրապետության ավելի քան 150 հազար տնային տնտեսություն:

Առաջնահերթություն տալով համայնքների զարգացմանը՝ ընկերությունը վերջին ամիսներին մեծ ծավալի աշխատանքներ է տարել մարզերում, մասնավորապես՝ Սյունիքի, Գեղարքունիքի ու Կոտայքի:

«Մեզ համար կարեւոր է մարզերում նման ենթակառուցվածքների կառուցումը, որը երկարաժամկետ հեռանկարում բերելու է տեղի տնտեսական ակտիվությանը եւ, հետեւաբար, բնակչության ուժեղացմանը: Վերջին շրջանում մեր թիմն աշխատել է հատկապես Սյունիքի մարզում՝ NGN ցանցով ծածկելով տնտեսությունների 50 տոկոսից ավելին»,- նշեց Team Telecom Armenia-ի տնօրեն Հայկ Եսայանը:

Մարզային աշխատանքներին զուգահեռ ընկերությունը մեկնարկել է ցանցի կառուցումը նաեւ Երեւանի Կենտրոն համայնքում, որը նման արագության ինտերնետի ամենամեծ պահանջ ունեցող վարչական շրջանն է:

Հիշեցնենք, որ 25 Գբ/վ արագությամբ այս ցանցն ամբողջությամբ կամ մասամբ հասանելի է Հրազդան, Նոր Հաճըն, Արմավիր, Մեծամոր, Ալավերդի, Սպիտակ, Իջեւան, Կապան, Քաջարան, Վարդենիս, Սիսիան եւ Ջերմուկ քաղաքներում, Հաղարծին ու Գնդեվազ գյուղերում, իսկ Երեւանում՝ Դավթաշեն, Արաբկիր, Նոր Նորք, Ավան եւ Ջեյթուն համայնքներում:

NGN ցանցի հիման վրա ստեղծված Cosշo սակագնային փաթեթները ներառում են մինչեւ 1000 Մբ/վ գերարագ ինտերնետ, IP հեռուստատեսություն եւ բջջային կապ: Փաթեթի վերաբերյալ տեղեկություն ստանալու եւ սակագներին ծանոթանալու համար կարող եք անցնել գրել հաղորդագրություն ընկերության ֆեյսբուքյան պաշտոնական էջին, զանգահարել 100 անվճար համարին կամ մոտենալ վաճառքի եւ սպասարկման կենտրոններ:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը: Առաջիկայում այս ցանցին կմիացվեն Հայաստանի ողջ տարածքում գործող բջջային կայանները, ինչի շնորհիվ զգալիորեն կբարելավվի նաեւ շարժական կապի որակը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ

ՔԱՆԻ՞ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՈՒՆԵՆՔ ԱՅՍ ՏԱՐԻ

Երեկ Հայաստանի դպրոցներում հնչեց ուսումնական տարվա ավարտն ազդարարող «Վերջին զանգ»-ը:

Վերջին դասը կլինի մայիսի 26-ին, եթե աշխատում են հնգօրյա գրաֆիկով, իսկ 6-օրյա գրաֆիկի դեպքում՝ մայիսի 27-ին:

Հիմնական դպրոցը՝ 9-րդ դասարանը, կավարտի շուրջ 35.300 սովորող, 12-րդ դասարանը՝ 19.900 շրջանավարտ:

Հանրապետությունում հանրակրթական դպրոցների շրջանավարտների համար «Վերջին զանգ»-ի միջոցառումներ կանցկացվեն, սակայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հորդորում է պահպանել համավարակով պայմանավորված անվտանգության բոլոր կանոնները:

2023 թվականին ուսումնական տարվա ավարտական դասարանցիներին շնորհավորական ուղերձով է հանդես եկել նաեւ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը. «Շնորհավորում եմ բոլորիդ այս կարեւոր եւ ուղենշային օրվա կապակցությամբ: Գիտեմ, որ շատ հարցեր ունեք. դրանց մի մասի պատասխանները վստահաբար գտել եք դպրոցի եւ ձեր ուսուցիչների շնորհիվ: Հարցերի մեծ փնջի համար էլ այս պահին պատասխան չունեք, եւ ձեր կյանքի հաջորդ փուլերում փորձելու եք գտնել այդ պատասխանները՝ սխալվելով ու հաջողելով, հիասթափվելով եւ ոգեւորվելով, կասկածելով ու վստահելով: Կարեւոր է, որ այդ հետաքրքիր ու բազմաշերտ ճանապարհին պահեք հիմնական առանցքն ու արժեքները: Որ ասպարեզում էլ ձեր ջանքը դնեք, եղե՛ք հաստատակամ ու փորձե՛ք անել լավագույնը, եղե՛ք հոգատար հանրության առջեւ, պատասխանատու եւ պահանջատեր՝ պետության առջեւ, սովորե՛ք սիրել ու ներել, ինքներդ ձեզ համար ձեւակերպել եւ պահել ձեր սկզբունքներն անորոշ ու բարդ իրավիճակներում, մտածել ձեր որոշումների եւ արարքների հետեւանքների ու ազդեցության մասին»:

Նշենք, որ օրվա առթիվ ՀՀ ոստիկանությունը հայտարարություն է տարածել, որով տեղեկացնում է, որ ուժեղացված ծառայություն կիրականացնի նաեւ «Վերջին զանգ»-ի երեկոյան՝ տոնական խնջույքների ժամանակ:

«Սիրելի՛ շրջանավարտներ: Շնորհավորում ենք «Վերջին զանգ»-ի կապակցությամբ, մաղթում հաջողություն եւ նպատակների իրականացում: «Վերջին զանգ»-ի միջոցառումներով պայմանավորված՝ հանրապետության մայրաքաղաքում եւ մարզերում իրականացվելու է ուժեղացված ծառայություն: Բոլոր դպրոցներում, որտեղ նախատեսված են տոնական արարողություններ, կլինեն ոստիկանության ներկայացուցիչներ, մարզերում, որտեղ գործում է պարեկային ծառայությունը, դպրոցներում ու հարակից տարածքներում հասարակական կարգը կապահովեն պարեկային վերակարգերը: Ուժեղացված ծառայություն կիրականացվի նաեւ երեկոյան՝ տոնական խնջույքների ժամանակ: Պարեկային ծառայության եւ ճանապարհային ոստիկանության խնդիրն է բացառել շրջանավարտների կողմից մեքենա վարելու դեպքերն ու ճանապարհային երթեւեկության կանոնների այլ խախտումներ:

Միեւնույն ժամանակ հիշեցնենք, որ մեր նպատակը պատժելը չէ, այլ հասարակական կարգի եւ օրվա տոնականության պահպանումը»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ

ԱՄՈՒՍՆԱՑԱԾ ՏՂԱՄԱՐԴՈՒ ՀԵՏ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համազգային թատրոնի դերասանուհի Ժաննա Վելիցյանը, որը հեռուստադիտողին առավել հայտնի դարձավ «Էլենի օրագիրը» հեռուստասերիալից եւ «Ճիշտ այդպես» նախագծից, «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում հարց ու պատասխան է կազմակերպել իր հետեւորդների հետ եւ պատասխանել նրանց հարցերին:

Հետեւորդներից մեկը դերասանուհուն հարցրել է. «Իսկ չե՞ս ամաչում ամուսնացած տղամարդու հետ հանդիպելուց»: Ի պատասխան Ժաննան ասել է. «Այ սա նորություն էր. եթե դժվար չէ, կասե՞ք՝ հատկապես որ ամուսնացած տղամարդու հետ եմ հանդիպում»:

Նշենք, որ Ժաննա Վելիցյանը Տաշիր քաղաքից է տեղափոխվել Երեւան: Ավելի վաղ ArmLur.am-ի հետ զրույցում ասել էր. «Հայրս սատար կանգնեց, ասաց, որ միշտ երազել է, որ զավակներից մեկը շարունակի արվեստի որեւէ ճյուղով զբաղվել: Եվ, ահա, դուստրը հայտնում է, որ ուզում է դառնալ դերասանուհի: Շատ ուրախացավ եւ, իհարկե, օգնեց»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՆՎԱՃԵԼ ԵՆ 11 ՄԵԴԱԼ

Բելառուսի Գրոդնո քաղաքում անցկացված ազատ ոճի ըմբշամարտի մրցաշարին (նվիրված Դ.Մ. Կարբիշեւին) մասնակցել են նաեւ հայ երիտասարդ ըմբիշները:

Ոսկե մեդալակիրներ են դարձել 57 կգ Սարգիս Բեգոյանը, 61 կգ Նորիկ Հարությունյանը, 65 կգ Հայկ Աբրահամյանը եւ 97 կգ Խաչատուր Խաչատրյանը:

Արծաթե մեդալներ են նվաճել 57 կգ Հայկո Գասպարյանը եւ 70 կգ Դավիթ Մարգարյանը:

Բրոնզե մեդալներ են նվաճել 57 կգ Նարեկ Հակոբյանը, 65 կգ Աշոտ Չափուխյանը, 70 կգ Անուշավան Բարսեղյանը եւ Արտյոմ Իսախանյանը եւ 79 կգ Արեն Իսրայելյանը:

Հայաստանի երիտասարդական թիմը պատրաստվում է հունիսի 26-ից հուլիսի 2-ն անցկացվելիք Եվրոպայի առաջնությանը:

ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԴԵԲՅՈՒՏ

Marli New York-ն իր հավաքածուն առաջին անգամ ներկայացրել է Կանի կինոփառատոնում՝ ի պատիվ The Art of Elysium-ի 25-ամյակի:

Հյուրերի թվում էին Ջուլիա Ֆոքսը, Քլեր Հոլթը, Լիլի Գլադստոնը, Անոկ Յայը, Ալթոն Մեյսոնը, Չեյս Քրոուֆորդը, Ջերեմի Հարիսը եւ շատ ուրիշներ: Հյուրերը փորձել են հայտնի ոսկերչական մոդելներ՝ Tip-Top-ից մինչեւ Cleo: Նկատվել են նաեւ նմուշներ՝ Empire նոր հավաքածուից:

Մարալ Արթինյանը Marli New York ոսկերչական ապրանքանիշի հիմնադիրն է: Բավականին կարճ ժամանակում նրան հաջողվեց անուն ստեղծել եւ հետք թողնել ոսկերչական բիզնեսում: Նրա նուրբ զարդերը կրել են այնպիսի աստղեր, ինչպիսին է Շարլիզ Թերոնը: Թեյլոր Հիլլը նկարահանվել է ապրանքանիշի գովազդային արշավում: Հայտնի մարդկանց ցուցակն անվերջ է:

Կաննում դեբյուտից մի քանի օր առաջ Արթինյանը ներկայացրել է Marli New York-ի նոր հավաքածուն, որը կոչվում է Empire: Հրավիրված հյուրերի թվում էր նաեւ մոդել, հայազգի ինֆլուենսեր Մարգարիտա Սախաջյանը:

Սահակյանի խոսքով՝ զարդերը շքեղ են: «Ես շատ ուրախ եմ, որ գիտակցում եմ՝ նման ապրանքանիշի հետեւում կանգնած են հայերը»,- ասել է ինֆլուենսերը:

● *Մայիսի 27-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «44 աստիճանի վրա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:

Ելենա Ավետիսյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի, իսկ մինչեւ տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

Աշխատանքի անցնելուց առաջ գործատուն կամ նրա լիազորած անձը պարտավոր է աշխատանքի ընդունվող անձին պատշաճ ծանոթացնել աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող գործատուի այլ իրավական ակտերին:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի: Աշխատանքային պայմանագրում նշված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է աշխատանքային պայմանագրի լուծման համար:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ

ՀԱՐՑ. Վերգեսնյա ի՞նչ փոխադրամիջոցից կարող եմ օգտվել «Զվարթնոց» միջազգային օդանավակայան ժամանելուն պես:

Հարություն Հովհաննիսյան (27 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Օդանավակայանի Ժամանման սրահից դուրս գալուն պես օդանավակայանի շենքի հարակից տարածքից կարող եք օգտվել ավտոբուսային երթուղուց:

Ավտոբուսային երթուղին առավոտյան ժամը 7:00-ից մինչեւ 22:00-ն գործում է 30 րոպե միջակայքով:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուղեվարձը 300 դրամ է՝ մեկ անձի համար: Այն անհրաժեշտ է վճարել կանխիկ ՀՀ դրամով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

«Ժողովուրդ» օրաթերթի ֆոտոխցիկը Արաբկիր վարչական շրջանում ֆիքսել է ճանապարհի քանդված հատվածում կանգնած մեքենա: Պարզ չէ՝ պատահաբար է մեքենան հայտնվել այդտեղ, թե դիտավորությամբ են կայանել այդ հատվածը չքանդելու համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 11 +16 + 20
Կոտայքի լեռներ	+ 6 + 9 +17 + 20
Կոտայքի նախալեռներ	+11 + 14 +21 + 23
Գեղարքունիք	+ 6 + 11 +17 + 20
Լոռի	+ 8 + 11 +19 + 23
Տավուշ	+10+ 15 +22 + 25
Արագածոտնի լեռներ	+ 6 + 9 +15 + 18
Արագածոտնի նախալեռներ	+13 + 14 + 21 + 25

Արարատ	+13 + 15 +25 + 27
Արմավիր	+11 + 13 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +16 + 18
Վայոց ձորի նախալեռներ	+12 + 14 +24 + 26
Սյունիքի հովիտներ	+13 + 17 +27 + 30
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 11 +21 + 23
Արցախ	+15 + 19 +24 + 28
Երեւան	+ 11+ 13 +24 + 26

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.5.2023**
Հասցեն՝ Գերաքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*